ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵԾՆԼ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ Վ. ՀՈԿՏԱՆՅԱՆԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ Ռ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

6-Ա

ք. Երևան 10 ապրիլ 2013թ.

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը՝ կազմով. Է. Բաբայան (նախագահ), Ա. Շուշյան (նախագահի տեղակալ), Լ. Պետրոսյան, Ա. Խուդավերդյան, Ա. Սարգսյան (այսուհետ՝ Հանձնաժողով), համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի, քննարկեց Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն Վ. Հոկտանյանի 2012 թվականի դեկտեմբերի 17-ի Թի-121151 և ՀՀ քաղաքացի Ռ. Նիկողոսյանի 26.09.2012թ., 24.10.2012թ., և 05.11.2012թ. դիմումները՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՊԵԿ) նախագահ Գ. Խաչատրյանի կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու կամ իր պաշտոնական լիազորությունների իրականացման ընթացքում շահերի բախման իրավիճակում գտնվելու վերաբերյալ:

Դիմումներում մասնավորապես նշված է, որ ըստ *«Հայկական ժամանակ»* օրաթերթի 2012 թվականի հոկտեմբերի 18-ի համարում հրապարակված *«Մենքումերոնքով աշխատում են»*, *«Պայքարի իրական մարտիկը»* և *«Lragir.am»* կայքում հրապարակված *«ՀԴՄ կտրոնների բարեբեր մենաշնորհը»* հոդվածներում անդրադարձ է կատարվել ՊԵԿ նախագահ Գ. Խաչատրյանի կողմից իրականացվող կամ «վերահսկվող» ձեռնարկատիրական

գործունեությանը: Մասնավորապես՝ համաձայն վերոհիշյալ հրապարակումների ՊԵԿ նախագահ Գ. Խաչատրյանին է պատկանում «Ալեքսերվ» ընկերությունը, որը զբաղվում է ՀԴՄ կտրոնների թղթերի մատակարարմամբ: Բացի այդ, ըստ հրապարակումների Գ. Խաչատրյանի անվան հետ են կապվում «Ապեյրոն» ՍՊԸ, «Մեգաֆուդ» ՍՊԸ, «Մեգասպորտ», «Մեգամոթորս», «Յուքոմ», «Խրոնոգրաֆ», «Չիմեգ», «Հագուստի աշխարհ», «Գալաքսի սուպերմարկետ», «Գալաքսի հացի գործարան», «Ամասիայի կաթի գործարան», «Այյանս» մաքսային տերմինալ և «Սանտա Ֆե» ընկերությունները:

Դիմողները խնդրել են Հանձնաժողովին հարուցել վարույթ ստուգելու տվյալ հրապարակումներում նշված փաստերի իսկությունը և պարզել առկա է շահերի բախման իրավիճակ թե ոչ, ներդրումները կառավարելիս չեն օգտագործվել արդյոք պաշտոնական դիրքը և լիազորությունները:

Հանձնաժողովի կողմից մինչվարույթային փուլում կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ «Գալաքսի սուպերմարկետ» «Գալաքսի հացի գործարան», «Ամասիայի կաթի գործարան», «Սանտա Ֆե» անվանումներով ընկերություններ ՀՀ-ում գրանցված չեն, «Այյանս» մաքսային տերմինալ» ընկերություն գրանցված չէ, սակայն առկա է «Այյանս» տերմինալ» ընկերություն, որը վերակազմավորվել է «Տրանս Այյանս» ՍՊԸ-ի:

Հետևաբար, դիմումներում նշված փաստերը քննարկման են ենթակա միայն «Ալեքսերվ», «Ապեյրոն», «Մեգաֆուդ», «Մեգասպորտ», «Մեգամոթորս», «Յուքոմ», «Խրոնոգրաֆ», «Չիմեգ», «Հագուստի աշխարհ», «Տրանս-Այյանս» ընկերությունների մասով:

Հիմք ընդունելով Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն Վ. Հոկտանյանի 2012 թվականի դեկտեմբերի 17-ի Թի-121151 և ՀՀ քաղաքացի Ռ. Նիկողոսյանի 26.09.2012թ., 24.10.2012թ. և 05.11.2012թ. դիմումները և ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածով՝

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն Վ. Հոկտանյանի 2012 թվականի դեկտեմբերի 17-ի Թի-121151 և ՀՀ քաղաքացի Ռ. Նիկողոսյանի 26.09.2012թ., 24.10.2012թ. և 05.11.2012թ. դիմումների հիման վրա հարուցել վարույթ:

2. Առաջարկել ՊԵԿ նախագահ Գ. Խաչատրյանին սույն որոշումը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում ներկայացնել քննարկվող հարցի վերաբերյալ իր առարկությունները և բացատրությունները:

Հանձնաժողովի նախագահ *Է. Բաբայան*